ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀԳԴ-ՄԱԾՁԲ-26/9>>

ք. Երևան <<09>> փետրվարի 2026թ.

ՀՀ դատախազությունն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Ափրիկյանի, որը գործում է ՀՀ դատախազության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /ՊՈԱԿ/, ի դեմս տնօրենի Դ.Ղուլյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **փորձաքննության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4. Կատարողից պահանջել առաջադրանքի հիման վրա և սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան ապահովել փորձաքննության կատարումը, եզրակացության կազմումը և այդ մասին Պատվիրատուին տեղեկացումը 15 /տասնհինգ/ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված ժամկետի հաշվարկը սկսվում է փորձաքննություն նշանակելու մասին որոշումը (առաջադրանքը) և փորձաքննության կատարման համար անհրաժեշտ նյութերը, ելակետային տվյալները Կատարողի կողմից ստանալու օրվան հաջորդող օրը: Սույն կետում նշված 15-օրյա ժամկետը չի տարածվում «Անշարժ գույքի, այդ թվում՝ դրա արժեքային ցուցանիշների փորձաքննություն» ենթատեսակով փորձաքննությունների նկատմամբ, որոնց մասով կատարման ժամկետը յուրաքանչյուր դեպքում Կողմերի միջև ենթակա է համաձայնեցման գրավոր եղանակով: Բարդ փորձաքննությունների կատարման դեպքում սույն կետում նշված ժամկետը կարող է երկարացվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Կատարողի գրավոր տեղեկացման հիման վրա:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը և տուգանքը:

2.2.3. Կատարողի գրավոր պահանջի /միջնորդության/ հիման վրա, հնարավոր սեղմ ժամկետում, վերջինիս տրամադրել փորձաքննության կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ ելակետային տվյալներ /այսուհետ՝ հետազոտելի օբյեկտ/,

2.2.4. ըստ անհրաժեշտության, Կատարողի պահանջով, մասնակցել փորձաքննությանը

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը: Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը կազմում է 4500 ՀՀ դրամ, ներառյալ հարկերը: Յուրաքանչյուր մեկ առանձին

օբյեկտի փորձաքննության միջին նորմատիվային ժամածախսը և փորձաքննության մեկ առանձին օբյեկտի գնահատման չափանիշները կիրառվում են և դրանց արժեքն ըստ փորձաքննությունների տեսակների և ենթատեսակների հաշվարկվում են ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 11-ի N N1864-L որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կողմերը պատասխանատվություն են կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի N 1 հավելվածում նշված մատուցման ենթակա սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, ինչպես նաև միանվագ տուգանք վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում,

պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Սույն պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ դատախազություն **ք.Երևան, Վ.Սարգսյան 5** **ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.** **Հ/Հ 900011180081** **ՀՎՀՀ 02506634**	**«Հայաստանի Հանրապետության** **փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-** **ք.Երևան, Արշակունյաց 23** **ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ** **Հ/Հ 900018003146** **ՀՎՀՀ 02512069**
----------/Մ. Ափրիկյան **(ստորագրություն)** **Կ.Տ**	**----------/Գ. Դուլյան** **(ստորագրություն)** **Կ.Տ**

Հավելված N 1
«09» փետրվարի 2026թ. կնքված
N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-26/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50531140/3	Փորձաքննությունների ծառայություններ	դրամ	5000000	1	ք. Երևան- Վ. Սարգսյան 5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2026թ.

Փորձաքննության տեսակը և կոդը		**Փորձաքննության ենթատեսակը և կոդը**		**Փորձաքննության մեկ առանձին օբյեկտի արժեքը /ՀՀ դրամ/**
Ձեռագրաբանական	01	Ձեռագրի փորձաքննություն	01-01	63000
		Ստորագրության փորձաքննություն	01-02	54000
Հեղինակային	02	Գրավոր խոսքի հեղինակի պարզման փորձաքննություն	02-01	99000
Փաստաթղթաբանական	03	Փաստաթղթի և/կամ դրա պատրաստման եղանակի փորձաքննություն	03-01	72000
		Փաստաթղթի ռեկվիզիտների փորձաքննություն	03-02	72000
		Դրամանիշերի և/կամ արժեթղթերի փորձաքննություն	03-03	36000
		Փաստաթղթի ռեկվիզիտների նյութի նույնականացման և/կամ ռեկվիզիտների կատարման վաղեմության փորձաքննություն	03-04	126000
		Փաստաթղթաբանական տեսակի այլ օբյեկտների փորձաքննություն	03-05	54000
Տեսաձայնագրային	04	Ձայնի և հնչող խոսքի փորձաքննություն վերծանման նպատակով	04-01	72000
		Ձայնագրությունների ձայնային միջավայրի, պայմանների, միջոցների, նյութերի և հետքերի փորձաքննություն	04-02	72000
		Ձայնի և հնչող խոսքի փորձաքննություն անձի նույնականացման նպատակով	04-03	72000
		Տեսապատկերի, տեսագրությունների պայմանների, միջոցների, նյութերի և հետքերի փորձաքննություն	04-04	72000
Ֆոտոտեխնիկական և	05	Լուսանկարի ֆոտոտեխնիկական փորձաքննություն	05-01	54000

դիմանկարային		Լուսանկարի փորձաքննություն անձի դիմանկարային նույնականացման նպատակով	05-02	63000
Հետքաբանական	06	Մարդու կամ կենդանիների կողմից թողնված հետքերի փորձաքննություն	06-01	36000
		Առարկաների, գործիքների, մեխանիզմների և դրանց կողմից թողնված հետքերի փորձաքննություն	06-02	45000
		Տրանսպորտային միջոցների, դետալների և դրանց կողմից թողնված հետքերի փորձաքննություն	06-03	72000
		Սառը և նետողական զենքի փորձաքննություն	06-04	45000
Զգաբանական	07	Հրազենի և դրա փամփուշտների փորձաքննություն	07-01	54000
		Հրազենային վնասվածքների և հետքերի, կրակոցի հանգամանքների փորձաքննություն	07-02	54000
		Կրակոցի հետքերի և արգասիքների քիմիական փորձաքննություն	07-03	54000
		Հրազենի հատուկ դրոշմվածքի պարզման փորձաքննություն	07-04	36000
Պայթունատեխնիկական	08	Պայթուցիկ նյութերի, դրանց պայթյունի արգասիքների և հետքերի փորձաքննություն	08-01	99000
		Ռազմամթերքների, պայթուցիկ սարքավորումների և դրանց պայթյունի հետքերի փորձաքննություն	08-02	99000
		Վառոդների, հրագործական բաղադրությունների և դրանց այրման հետքերի փորձաքննություն	08-03	99000
Նյութագիտական	09	Մանրաթելերի և գործվածքների փորձաքննություն	09-01	36000
		Լաքուներկերի և ներկածածկույթների փորձաքննություն	09-02	72000
		Նավթամթերքների և վառելիքաքսուկային նյութերի փորձաքննություն	09-03	72000
		Մետաղների և համաձուլվածքների փորձաքննություն	09-04	36000
		Հեղուկ կամ պինդ նյութերի փորձաքննություն ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրիայի մեթոդի կիրառմամբ	09-05	126000
		Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների փորձաքննություն	09-06	72000
		Ապակու, սիլիկատային, կերամիկական կամ նմանատիպ այլ ծագման նյութերի փորձաքննություն	09-07	72000
		Ռետինե, պլաստմասսե կամ այլ պոլիմերային նյութերի փորձաքննություն	09-08	72000
		Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, դեղամիջոցների, խիստ ներգործող և թունավոր նյութերի փորձաքննություն	09-09	72000
		Սպիրտ պարունակող ոչ սննդային նշանակության հեղուկների, նաև պարֆյումերային արդյունաբերության արտադրանքի փորձաքննություն	09-10	72000
		Անհայտ ծագման նյութերի փորձաքննություն	09-11	90000
Սննդամթերքի և խմիչքների	10	Սննդամթերքի և դրա հումքի որակական ցուցանիշների փորձաքննություն	10-01	54000
		Սննդամթերքի և դրա հումքի անվտանգության ցուցանիշների (բացի մանրէաբանական) փորձաքննություն	10-02	72000
		Սննդամթերքի և դրա հումքի անվտանգության ցուցանիշների մանրէաբանական փորձաքննություն	10-03	72000

		Ալկոհոլային, թույլ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքների և դրանց հումքի որակական ցուցանիշների փորձաքննություն	10-04	54000
		Ալկոհոլային, թույլ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքների և դրանց հումքի անվտանգության ցուցանիշների (բացի մանրէաբանական) փորձաքննություն	10-05	72000
		Թույլ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքների և դրանց հումքի անվտանգության ցուցանիշների մանրէաբանական փորձաքննություն	10-06	72000
Հողագիտական և կենսաբանական	11	Հողային ծագման օբյեկտների փորձաքննություն	11-01	36000
		Բուսական ծագման օբյեկտների փորձաքննություն առանց դենդրոխրոնոլոգիական մեթոդի կիրառման	11-02	36000
		Բուսական ծագման օբյեկտների փորձաքննություն դենդրոխրոնոլոգիական մեթոդի կիրառմամբ	11-03	36000
		Կենդանական ծագման օբյեկտների փորձաքննություն	11-04	36000
Հրդեհատեխնիկական	12	Հրդեհից վնասված շենքերի և շինությունների, այլ առարկաների կամ կառուցվածքների փորձաքննություն	12-01	81000
		Հրդեհից վնասված հողատարածքների փորձաքննություն	12-02	81000
		Հրդեհից վնասված շարժական գույքի փորձաքննություն	12-03	81000
		Նյութերի և սարք-սարքավորումների, այդ թվում տեխնոլոգիական գործընթացների հրդեհավտանգ հատկությունների և սարքավորումների աշխատանքի հրդեհավտանգ ռեժիմների փորձաքննություն	12-04	72000
		Տեխնոլոգիական գործընթացների, տեխնոլոգիական սարք-սարքավորումների, շենքերի, շինությունների հրդեհային անվտանգության նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանության, դրանց հրդեհավտանգավորության և հակահրդեհային սարքավորումներով ապահովվածության փորձաքննություն	12-05	81000
		Հրդեհաշիջման ընթացքում հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների գործողությունների փորձաքննություն	12-06	81000
Շինարարատեխնիկական	13	Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների փորձաքննություն	13-01	81000
		Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն	13-02	90000
		Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների տեխնիկական վիճակի և/կամ ինժիներատեխնիկական փորձաքննություն	13-03	81000
		Հողաշինարարական փորձաքննություն	13-04	63000
Ավտոտեխնիկական	14	Ճանապարհատրանսպորտային պատահարի փորձաքննություն	14-01	36000
		Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի փորձաքննություն	14-02	72000
		ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման հանգամանքների պարզման տրանսպորտային հետքաբանական փորձաքննություն	14-03	72000
		Ճանապարհի տեխնիկական վիճակի, ճանապարհատրանսպորտային	14-04	45000

		պատահարի վայրում ճանապարհային պայմանների փորձաքննություն		
		Տրանսպորտային միջոցների վերականգնման, վերանորոգման և մնացորդային դետալների պիտանելիության փորձաքննություն	14-05	45000
Ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական	15	Դատահաշվապահական փորձաքննություն	15-01	126000
		Ֆինանասատնտեսագիտական փորձաքննություն	15-02	126000
Ապրանքագիտական	16	Պարենային, ոչ պարենային ապրանքների, կենսաբազմազանության օբյեկտների, ծառայությունների, դրանց փաստաթղթերի, այդ թվում արժեքային ցուցանիշների փորձաքննություն	16-01	36000
		Տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն	16-02	45000
		Բարդ կառուցվածքային առանձնահատկություններ ունեցող արտադրական կամ այլ ապրանքային համալիրների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն	16-03	144000
		Ոչ նյութական ակտիվների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն	16-04	144000
		Անշարժ գույքի, այդ թվում դրա արժեքային ցուցանիշների փորձաքննություն	16-05	54000
		Շինարարական նյութերի և աշխատանքների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն	16-06	54000
Էլեկտրատեխնիկական	17	Ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, էլեկտրամեխանիկական կենցաղային նշանակության սարքավորումների փորձաքննություն	17-01	99000
Դատագենետիկական	19	Դատագենետիկական (ԴՆԹ-նույնականացման) փորձաքննություն	19-01	99000
Համակարգչատեխնիկական	20	Ցանցային փորձաքննություն	20-01	63000
		Ծրագրային ապահովումների փորձաքննություն	20-02	126000
		Համակարգիչների կոշտ սկավառակներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	20-03	144000
		Թվային տեսագրիչների կոշտ սկավառակներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	20-04	90000
		Բջջային հեռախոսների կամ պլանշետային համակարգիչների ներքին հիշողության կրիչներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	20-05	108000
		Այլ թվային հիշողության կրիչներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	20-06	54000
		Համակարգչային սարքավորումների, դրանց աշխատունակության և/կամ կիրառման նշանակության փորձաքննություն	20-07	54000
Դատաբժշկական	21	Անձի առողջությանը պատճառված վնասի փորձաքննություն	21-01	9000
		Դատաբժշկական հանձնաժողովային կամ կրկնակի փորձաքննություն	21-02	45000
		Կենսաբանական ծագման հետքերի և/կամ նմուշների փորձաքննություն	21-03	9000
		Հյուսվածքաբանական փորձաքննություն	21-04	9000
		Քիմիական (այդ թվում՝ կենսաքիմիական) փորձաքննություն	21-05	18000
		Բժշկաքրեագիտական փորձաքննություն	21-06	9000

		Դիակի դատաբժշկական փորձաքննություն	21-07	40500
		Դատաբժշկական լրացուցիչ կամ համալիր փորձաքննություն	21-08	22500
Մշակութային արժեքների	22	Կերպարվեստի բնագավառի փորձաքննություն	22-01	72000
		Դեկորատիվ կիրառական արվեստի բնագավառի փորձաքննություն	22-02	63000
		Երաժշտական գործիքների փորձաքննություն	22-03	45000
		Գրքարվեստի բնագավառի փորձաքննություն	22-04	63000
		Հին դրամների փորձաքննություն	22-05	63000
		Գեղագիտական փորձաքննություն	22-06	45000
		Հնագիտական փորձաքննություն	22-07	108000
		Մշակութաբանական այլ փորձաքննություն	22-08	45000
Հոգեբանական	23	Անձի հոգեբանական փորձաքննություն	23-01	153000
		Հետմահու հոգեբանական փորձաքննություն	23-02	153000
		Հոգեբանական այլ տեսակի փորձաքննություն	23-03	108000
Ճարտարագիտատեխնիկական	24	Մեքենա-մեխանիզմների և սարք-սարքավորումների խափանման պատճառների և հետևանքների պարզման փորձաքննություն	24-01	153000
		Արտադրությունում տեխնոլոգիական գործընթացներում շեղումների և խախտումների պատճառների և հետևանքերի պարզման փորձաքննություն	24-02	153000
		Անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման պատճառների և հետևանքների պարզման փորձաքննություն	24-03	99000
Լինգվիստիկական	26	Գրավոր խոսքի փորձաքննություն	26-01	90000
		Բանավոր խոսքի փորձաքննություն	26-02	90000
Էկոլոգիական	27	Հողային ռեսուրսների և երկրաբանական օբյեկտների փորձաքննություն	27-01	144000
		Կենդանական և բուսական աշխարհի փորձաքննություն	27-02	144000
		Ջրային ռեսուրսների և օբյեկտների փորձաքննություն	27-03	180000
		Մթնոլորտային օդի փորձաքննություն	27-04	108000
		Ճառագայթային իրավիճակի փորձաքննություն	27-05	270000
		Շրջակա միջավայրի վրա այլ բնույթի ազդեցության փորձաքննություն	27-06	108000
Պայթյունատեխնոլոգիական	28	Պայթյունից վնասված օբյեկտների փորձաքննություն	28-01	108000
		Նյութերի և տեխնոլոգիական սարքավորումների, այդ թվում տեխնոլոգիական գործընթացների պայթյունավտանգ հատկությունների և սարքավորումների աշխատանքի պայթյունավտանգ ռեժիմների փորձաքննություն	28-02	108000
		Տեխնոլոգիական գործընթացների և տեխնոլոգիական սարքավորումների, շենքերի և շինությունների պայթյունային անվտանգության նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանության, դրանց պայթյունակայունության, պայթյունի հետևանքների հնարավոր նվազեցման միջոցներով ապահովվածության փորձաքննություն	28-03	108000
Մտավոր սեփականության օբյեկտների	29	Հեղինակային և հարակից իրավունքի բնագավառի փորձաքննություն	29-01	252000
		Գյուտերի բնագավառի փորձաքննություն	29-02	252000
		Արտոնագրման բնագավառի փորձաքննություն	29-03	180000

		Օգտակար մոդելների բնագավառի փորձաքննություն	29-04	180000
		Արտադրական նմուշների փորձաքննություն	29-05	108000
		Առևտրային նշանների շփոթության աստիճանի նմանության պարզման փորձաքննություն	29-06	252000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 9000111880081
ՀՎՀՀ 02506634

Մ. Ափրիկյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-
ք.Երևան, Արշակունյաց 23
ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

Դ.Գուլյան
(ստորագրություն)

Հավելված N 2
«09» փետրվարի 2026թ. կնքված
N ՀԳԴ-ՄԱԾՁԲ-26/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

			Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝				
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
1	50531140/3	Փորձաքննության ծառայություններ	1250000	2500000	3750000	5000000	**5000000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

Մ.Ափրիկյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-
ք.Երևան, Արշակունյաց 23
ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

Ռ.Ղուլյան
(ստորագրություն)